ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2022 թվականի N 1946-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 529-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի «Գույքի նվիրատվությունն ընդունելու մասին» N 529-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) «Սյունիքի մարզ» բաժինը 106.12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 106.13-րդ, 106.14-րդ, 106.15-րդ, 106.16-րդ և 106.17-րդ կետերով՝

«

106.13.	Առողջության առաջնային պահպանման կենտրոնի շենք	ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գ. Տեղ, Ս. Բարխուդարյան փող. 11/2	0.1087	14.04.2022 թ. N 26-Ա որոշում
106.14.	Առողջության առաջնային պահպանման կենտրոնի շենք	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ. Լիճք, 1-ին փողոց 13	0.039	24.02.2022 թ. N 10-Ա որոշում

106.15.	Առողջության առաջնային պահպանման կենտրոնի շենք	ՀՀ Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, գ. Լեհվազ, 4-րդ փողոց 2	0.0894	24.02.2022 թ. N 10-Ա որոշում
106.16.	Առողջության առաջնային պահպանման կենտրոնի շենք	ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, գ. Առաջաձոր, 1-ին փողոց 36	0.1	29.06.2022 թ. N 100-Ա որոշում
106.17.	Առողջության առաջնային պահպանման կենտրոնի շենք	ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք, գ. Շիկահող, 2-րդ փողոց 19	0,02624	29.06.2022 թ. N 100-Ա որոշում

»:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքերի՝ օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից նվիրատվության պայմանագրի կնքումը և գույքային իրավունքների պետական գրանցումը՝ դրանց հետ կապված ծախսերն իրակա-նացնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ